Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***31.03.2021թ. ժամը 12.00***

Նախագահում էր Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 59 անդամներից 55-ը:

Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին մարզի իրվապահ մարմինների ներկայացուցիչները, Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարը և քարտուղարի տեղակալը, վարչությունների ու բաժինների պետերը, մարզպետի խորհրդականը, Պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Գեղարքունիքի մարզի տարածքային ստորաբաժանման զորահավաքային բաժանմունքի պետ Բենիկ Սարգսյանը:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման մասին:
/Ձեկ. Մարտին Պետրոսյան - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պարտականությունները կատարող/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման 2021 թվականի 1-ին եռամսյակի արդյունքների մասին:
/Ձեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների 2019-2021թթ. սուբվենցիոն ծրագրերի գործընթացի մասին:
/Ձեկ. Արմեն Զոհրաբյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ/

4. Այլ հարցեր:

Ելույթներով հանդես եկան՝

Արման Ղազարյանը - Զոլաքար համայնքի ղեկավար
Վահրամ Գևորգյանը - Ծովագյուղ համայնքի ղեկավար
Վահրամ Կարապետյանը - Չկալովկա համայնքի ղեկավար
Տարոն Քոչարյանը - Ծովակ համայնքի ղեկավար
Կարո Գևորգյանը - Ներքին Գետաշեն համայնքի ղեկավար

Հայտարարություններով հանդես եկան՝

Վանիկ Հարությունյանը - Գեղարքունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Մարտին Պետրոսյանը - Գեղարքունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պարտականությունները կատարող

Կարեն Զազյանը - Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Գնել Սանոսյանը:

1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2021 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման ուղղությամբ՝ սեփական եկամուտների համամասնություններով պահանջվող ցուցանիշներն ապահովելու համար.

2) 2021 թվականի ապրիլի 10-ին մարզային շաբաթօրյակը պատշաճ կազմակերպելու և իրականացնելու համար աշխատանքներ տանել համայնքների ազգաբնակչության, համայնքապետարանների և ՀՈԱԿ-ների աշխատողների, համայնքների տարածքներում գործող կազմակերպությունների ու տնտեսվարող սուբյեկտների, առողջապահական ու կրթական հիմնարկների ու հաստատությունների հետ և ապահովել նրանց մասնակցությունը շաբաթօրյակին, հատկապես ուշադրության կենտրոնում պահել միջպետական, հանրապետական, մարզային և համայնքային ճանապարհների հարակից տարածքներն աղբից մաքրելու աշխատանքները:

Աղբավայրեր ունեցող համայնքներում կազմակերպել աղբաթաղում:

Շաբաթօրյակը կազմակերպելու հետ կապված խնդիրները քննարկել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների հետ.

3) 2021 թվականի ապրիլի 24-ին կազմակերպել և իրականացնել ծառատունկ:

Ծառատնկման ենթակա տարածքները և ծառերի անհրաժեշտ քանակները քննարկել Գեղարքունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության հետ:

Ծառատնկման ենթակա տարածքների մեջ ընդգրկել համայնքների գերեզմանոցները.

4) գյուղատնտեսական ծրագրերը հասանելի դարձնելու համար կազմակերպել հանդիպումներ համայնքների ազգաբնակչության հետ և ներկայացնել այդ ծրագրերը: Անհրաժեշտության դեպքում հանդիպումներին ներգրավվել Գեղարքունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության ներկայացուցիչներին և ծրագրերին քաջատեղյակ այլ մասնագետների.

5) աշխատանքներ տանել ցանքաշրջանառության մեջ 20-30 % կերային մշակաբույսերն ավելացնելու ուղղությամբ.

6) մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների խորհուրդների կազմավորման նոր կարգի պահանջների հետ կապված ճշտել համայնքների բնակչության թիվը և ներկայացնել Գեղարքունիքի մարզպետարան.

7) համայնքների առողջապահական հիմնարկների հետ համատեղ ակտիվ աշխատանքներ տանել կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման ուղղությամբ.

8) աջակցել ՀՀ ՊՆ 2-րդ բանակային կորպուսին.

9) համայնքներում գործող մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դասասենյակները համայնքների զոհված զինծառայողների անուններով անվանակոչելու համար ներկայացնել առաջարկություններ.

10) նախաձեռնությամբ հանդես գալ համայնքների փողոցներն անվանակոչելու համար.

11) ուշադրության կենտրոնում պահել համայնքների զոհված զինծառայողների ընտանիքների խնդիրները և անհրաժեշտության դեպքում դրանց լուծումները քննարկել Գեղարքունիքի մարզպետի հետ.

12) աշխատանքներ տանել համայնքների ազգաբնակչության հետ՝ համայնքի մահացած բնակչի թաղմանը հոգևորականի պարտադիր մասնակցությունն ապահովելու համար:

2. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի սահմանամերձ համայնքների ղեկավարներին՝ աշխատանքներ տանել համայնքների ազգաբնակչության հետ սահմանամերձ տարածքներում գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու համար:

05.04.2021

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ